

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ժամանակակից մեթոդներ օտար լեզուների ուսուցման գորընթացում

Կատարող՝ Աննա

Եղիազարյան

<<Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ,

անգլերեն

Ղեկավար՝ Հասմիկ Մատիկյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

1.Ներածություն	3
2. Օտար լեզվի ուսուցման մեթոդների տեսակները	5
3.Դասավանդման մոտեցումները (teaching approches)	10
4.Եզրակացություն	14
5.Օգտագործված գրականություն	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզուների եւ մասնավորապես անգլերենի ուսուցումը հանրակրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Դժվար է գերազնահատել օտար լեզուների ուսումնասիրության անհրաժեշտությունը եւ դրանց կիրառական նշանակությունը՝ որպես հաղորդակցման, ճանաչման, ինքնադրսևորման միջոց: Օտար լեզուների իմացությունը կարևոր է նաև առօրյա կյանքում, միջանձնային եւ միջմշակութային շփումների ընթացքում: Այս առումով առաջնային պայման է պատշաճ մակարդակով օտար լեզուների՝ հատկապես որպես միջազգայնորեն հաստատված լեզուների տիրապետումը: Տրամաբանական է, որ ներկայումս աշխարհի քաղաքակիրթ երկրներում օտար լեզվի դասավանդումը դրված է շատ լուրջ հիմքերի վրա, և այժմ նույնիսկ ոչ թե երկլեզվությունը, այլ բազմալեզվությունն է կրթության համակարգում շրջանառվող առանցքային հասկացությունը: Եվ որպեսզի հնարավոր լինի հասնել իրական արդյունքների, այսինքն սովորողը ձեռք բերի կայուն գիտելիքներ, զարգացնի կարողություններն ու հմըությունները և կարողանա դրանք իրական կյանքում կիրառել, պետք է հաշվի առնել տարբեր գործոններ, այդ թվում նաև ճիշտ մեթոդի ընտրությունը, որը խթանող դեր է կատարում ուսուցման և ուսումնառության գործընթացում: Օտար լեզուների դասավանդման նպատակն է ձևավորել տարբեր լեզուների տիրապետող անձ, որն ունակ հաղորդակցվել և գործել ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում: Այս բնագավառի դասընթացները նպատակաուղղված են Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հետևյալ կարողունակությունների ձևավորմանը՝

1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն,
2. Սովորել սովորելու կարողունակություն,
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5. Թվային և մեդիա կարողունակություն,
6. Մշակութային կարողունակություն,
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8. Տնտեսական կարողունակություն:

Օտար լեզվով հաղորդակցական կարողությունների զարգացումը գերակա լեզվի համակարգի իմացության նկատմամբ: Լեզվի հաղորդակցական ուսուցման մոտեցմամբ լեզվանյութը պետք է մատուցվի համապատասխան, ցանկալի է աութենտիկ, երբեմն և ուսումնական հաղորդակցական համատեքստի մեջ: Հատկապես կարևորում են տեսանյութերն ու ձայնագրությունները, ինչպես նաև լեզվակիրների կողմից գրված կամ նրանց հասցեագրված նամակները, բացիկները, լեզվակիր /բնախոս հանրություն լայնորեն կիրառվող նշանները, պաստառները, քարտեզները և այլն:

Հաղորդակցության բոլոր կարողությունների զարգացումը դասընթացներում ենթադրում է նաև անհատական և խմբային, հետազոտական և նախագծային աշխատանքներ, ցուցադրություններ, դերախաղեր, լեզվական բովանդակությունն ու հաղորդակցական կառողջություններն արտացոլող արդյունքների ստեղծում /պաստառ, բացիկ, զեկույց, ներկայացում/, որոնք նաև նպաստում են վերաբերմունքային և արժեհամակարգային վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Անհատական հետազոտական աշխատանքում դիտարկվում են արդի դասավանդման մեթոդների կիրառմամբ օտար լեզվի բառապաշարի մատուցման արդյունավետ միջոցներն ու սկզբունքները, ինչպես նաև ներկայացվող մեթոդների բովանդակությունը, առանձնահատկությունները, դասավանդման քայլերի հաջորդականությունը, դասաժամի արդյունավետ օգտագործումը, նյութի ճիշտ բաշխումը ժամանակի մեջ և այլ մեթոդական նրբություններ: Անդրադարձ է կատարվում նաև ուսուցման ոճերին, որոնք

մեթոդի ընտրության հիմքում են: Դրանցով են պայմանավորված նաև դասավանդողի և սովորողի դերը, իրավունքներն ու պարտականությունները դասավանդման գործընթացում: Որոշ մեթոդներ միտված են զարգացնելու լեզվի ուսուցման բոլոր հմտությունները՝ լսել, խոսել, գրել, կարդալ, իսկ մյուսները շեշտը դնում են կոնկրետ հմտությունների վրա: Մեթոդի ընտրության հարցում կարևոր է նաև հաշվի առնել, արդյոք դասընթացն անհատական է, թե՛ խմբային, ինչ ունակություններ և գիտելիքների բազա ունի սովորողը և այլն:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

“A thousand teachers, a thousand methods.”

-Chinese Proverb

Նորարարական տեխնոլոգիաներով համալրված այս դարում օտար լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում արդի տեսաբաններին: Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն: Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ: Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների:

Մեթոդաբանական գրականության մեջ տարբերակվում են լեզվուսուցման երեք առանցքային մոտեցումներ՝ կառուցվածքային (լեզուն դիտարկվում է որպես քերականական տարրերի կապակցման համակարգ), գործառական (լեզուն դիտարկվում է որպես որոշակի գործառույթների արտահայտման և իրականացման գործիք) և ինտերակտիվ (լեզուն դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման միջոց): Ելնելով լեզվուսուցման վերոհիշյալ մոտեցումներից՝ անգլիագիտական աղբյուրներում սովորաբար տարբերակվում են երեք հիմնական մեթոդ՝ քերականական (**grammatical method**), հաղորդակցական (**communicative method**) և հանրական (**public method**): Ներկայումս ավելի մեծ հեղինակություն են վայելում նորարարական տեխնոլոգիաների հիման վրա ձևավորված համացանցային աղբյուրները, որոնք նույնպես օտար լեզուների ուսուցման արդյունավետ միջոց են:

Օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության պատմությունը գիտի օտար լեզուների ուսուցման առավել ռացիոնալ մեթոդ գտնելու բազմաթիվ ու բազմազան փորձեր:

Ամենահինը բնական մեթոդն էր, որը ոչնչով չէր տարբերվում այն մեթոդից, որով երեխային սովորեցնում էիր իր մայրենի լեզուն: Օտար լեզուն տիրապետում էր պատրաստի նմուշների ընդօրինակմանը, ուսումնասիրվածի հետ անալոգիայով նոր նյութի կրկնվող և վերարտադրմանը: Բնական մեթոդը, որը հետապնդում էր զուտ գործնական նպատակներ՝ ուսուցում, առաջին հերթին՝ հեշտ տեքստ խոսելու և կարդալու ունակություն, երկար ժամանակ բավարարում էր հասարակության կարիքները, որտեղ օտար լեզվի արդյունավետ իմացությունը նրա արտոնությունն էր:

Դպրոցների առաջացման և օտար լեզվի՝ որպես ընդհանուր կրթական առարկա մտցնելու հետ, սկզբում նրանք նույնպես փորձեցին լեզուն սովորեցնել բնական ձևով, բայց այն շուտով փոխարինվեց թարգմանության եղանակով, որը գերակշռում էր մինչև 19-րդ դարի կեսերը:

Հաջորդ հարյուր տարվա ընթացքում շարունակական պայքար էր ընթանում քնական, հետազայում ուղղակի և թարգմանական մեթոդների կողմնակիցների միջև:

Օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության պատմության իմացությունը կօգնի սկսնակ ուսուցչին ավելի ազատ կողմնորոշվել դասավանդման մեթոդների ընտրության հարցում, դրանք ռացիոնալ կերպով համատեղել իրենց աշխատանքում և գիտակցաբար ու ստեղծագործաբար կիրառել իրենց աշխատանքում:

Այդ նպատակով ստորև ներկայացված է օտար լեզուների ուսուցման որոշ մեթոդների համառոտ ակնարկ:

Գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի.

Կառուցվածքային մոտեցում (լեզուն դիտվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ)

Քերականական թարգմանության մեթոդ (*The Grammar Translation Method*)– Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանություն: Հիմա այս մեթոդն օգտագործվում է մեռած լեզուներն ուսումնասիրելու համար:

.Աուդիո –լեզվական մեթոդ (*Audio-lingual method*)

Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտարլեզվով ձայնագրությունը:

• Համաչափության մեթոդ (*Proprioceptive method*)

Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի

ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որսովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:

Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների

/ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:

.Լեզվի իրավիճակային ուսուցում – Բանավոր մոտեցում (*Situational language teaching(Oralapproach)*)

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք

անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող ենթույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

.Ուղղորդված պրակտիկա /Վորձառություն/ (*Directed practice*)

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիսմեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի

ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային/ բազային/ արտահայտություններիավտոմատ տիրապետմանը:

Ինտերակտիվ մոտեցում. լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերություններիստեղծման ու հաստատման գործիք:

Ուղղակի մեթոդ (*The direct method*)

Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը,սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի

օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտարլեզվի <<բնական>> յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

.Հաջորդականության մեթոդ (The series method)

Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատ կրկնելով:

For example` Every day I get up at 8 o'clock, have a shower, dress, have breakfast and go to school. After school I come home have dinner and go to playground to play football with my friends and soon. Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով բառերը և նախադասությունները ավելի լավ յուրացնելու համար:

• Խոսակցական ուսուցում (Communicative language teaching)

Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն: For example. PANTOMIME -when the pupils like to show the word ,which they already have in their minds, to the others without speaking.

.Լռության մեթոդ (Silent Way)

Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում: Այս ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում:

Բնական մոտեցում (Natural approach)

Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորել ամեն ինչ: Ցանկացած նոր դաս պետք է հիմնված լինի նախորդ դասի վրա և լինի մատչելի յուրացման համար:

.Ֆիզիկական արձագանքման մեթոդ (Total Physical Response)

Առաջին փուլում սովորողները պասիվ ընկալում է նյութը՝ առանց այն օգտագործելու: Երկրորդ փուլում նրանք պետք է արձագանքեն որոշ բառերի, հասկապես բայերին, օրինակ, դրանք կատարելով: Եվ միայն այս երկու փուլը հաղթահարելուց հետո միայն սովորողներն իրենք են գործածում յուրացրած նյութը:

.Կարդալու և պատմելու մեթոդ (Teaching proficiency trough Reading and Story telling)

Համարվում է Ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթաճյուղ: Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ: Վերջիններս պետք է պատասխանեն հարցերին օգտագործելով նյութի բառերը:

Արդի կամ ժամանակակից ուսուցման մեթոդները կարելի է ուսումնասիրել հետևյալ աղյուսակով.

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ (TEACHING APPROACHES)

Ուսուցչակենտրոն(TEACHER CENTERED)_____Աշակերտակենտրոն(LEARNER CENTERED)

Առարկայակենտրոն (SUBJECT-MATTERED CENTER) _____ (LEARNER CENTERED)

Ուսուցչակենտրոն(TEACHER DOMINATED)_____Ինտերակտիվ(INTERACTIVE)

Ոչ ճիշտ մոտեցում (“BANKING” APPROACH)_____Կառուցողական (CONSTRUCTIVIST)

Կարգապահական (DISCIPLINAL)_____ Ամբողջական (INTEGRATED)

Անհատապաշտություն (INDIVIDUALISTIC)_____Համագործակցային (COLLABORATIVE)

Անուղակի (INDIRECT, GUIDED) _____ Ուղակի (DIRECT)

Ուսուցիչը ոչ միայն ասում, այլ նաև ներկայացնում և ցույց է տալիս թե ինչ է սովորեցնում: Ուսուցման գործընթացում հաշվի են առնվում սովորողների կարիքներն ու անհրաժեշտությունները ինչպես նաև նրանց հմտություններն ու կարողունակությունները: Նա պետք է վստահ լինի,որ սովորողը յուրացնի ամեն նյութ կախված նրա կարողունակությունից: Փաստերը պետք է ներկայացնի իրականության հետ համադրելով և օրինակներ բերելով: Նրանք պետք է օգտագործեն համապատասխան հնարներ և

մեթոդներ ուսուցումը մատչելի և արդյունավետ դարձնելու համար:

Ինչ վերաբերվում է ինձ ուսուցման ընթացքում ես օգտագործում եմ այնպիսի մեթոդներ, որոնք կհետաքրքրեն սովորողներին և ավելի կքաջալերեն ուսման նկատմամբ նրանց հետաքրքրությունները: Հատկապես կարևորում եմ դասարանի մասնակցությունը դասապրոցեսին, այլ ոչ թե՝ անհատի: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել ուսուցման սկզբունքների հետևյալ երեք փուլերին. 1 . Ուսուցումը պետք է լինի հետաքրքիր և գրավիչ,

2. Հաղորդել նոր տեղեկություններ և հետաքրքրություն առաջացնել հին տեղեկության մասին,

3. Ստեղծել հնարավորություններ՝ տարբերակելու, կիրառելու և ուսուցանելու կյանքի նորհմտությունները:

Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր մեթոդ ունի իր առավելությունն և դրանք խթանիչ դեր են հանդիսանում ու ոգևորում եմ յուրաքանչյուր սովորողի: Կախված դասապրոցեսից կիրառվում են տարբեր մեթոդներ:


Այստեղ կարող ենք բերել մի քանի մեթոդների օրինակներ. Նախօրոք հանձնարարված է կարդալ տեքստը և պատասխանել հարցերին լրագրող բառը յուրացնելու համար կիրառել ՄՏԱԳՐՈՂ - **Brainstorming** մեթոդը

News is brought to us by journalists. You can see them everywhere with their cameras, microphones and confusing questions. They report current events from all corners of our planet. They rush to hotbeds of war to inform us about victories and defeats, they reveal crimes. Some try to find out the truth, while others are after scandals. By their reports they form public opinion. It is not for nothing that politicians speak about information wars. Their work is very important as they leave us the records of the changing face of the world.

Պատասխանել հետևյալ հարցերին

1. Ի՞նչ տեսակի նորություն կնախընտրեիք լսել:


2. Ո՞վ է ձեր սիրելի լրագրողը և ինչու՞ :




Այս բառերը և բառակապակցությունները օգնում են սովորողներին գաղափար կազմել տեքստի մասին, ինչպես նաև խոսել լրագրողների և նրանց գործունեության մասին:

Վենի դիագրամա - **Ven diagram** – համեմատություն կազմել երկու տարբեր առարկաների միջև:

Նախօրոք հանձնարարված էր կարդալ նյութը Միացյալ Նահանգների մասին և համեմատել երկիրը իրենց սեփական երկրի հետ



Այս մեթոդի կիրառման շնորհիվ հնարավոր է առկա գիտելիքները հանրագումարի բերել, մի քանի բառով ներկայացնել բարդ մտքերը, զգացմունքները և պատկերացումները:



5. Person

Փոխներգործոն ընթերցանության նշաններ-Interactive reading guides

Փոխներգործոն ընթերցանության ուղեցույցը օգնում է աշակերտներին ընթերցանությունն առավել արդյունավետ դարձնել: Այս ռազմավարության կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

1. Աշակերտներին համառոտ ներկայացնել ընթերցանության համար նախատեսված առաջադրանքը:

2. Աշակերտների համար փոխներգործոն ընթերցանության ուղեցույց պետք է կազմել այն յուրացնելու համար: Պետք է սովորողներին օգնել կողմնորոշվել թե կարդալու ընթացքում ինչի վրա կենտրոնացնեն ուշադրությունը և յուրացնել նյութի խրթին թվացող հատվածները: Օգտագործվում են հետևյալ նշանները

V Ինչը նրանց արդեն հայտնի է:

+ ինչը նրանց հետաքրքիր է

-Ինչը հակասում է պատկերացումներին

? Ինչ կցանկանային իմանալ

V	+	-	?
Հայտնի է որ...	Հետաքրքիր է որ....	Դա ինձ դուր չի գալիս...	Կցանկանայի իմանալ...

Օտար լեզուների ուսուցումը այսօր պետք է անհրաժեշտություն լինի բոլորի համար, յուրաքանչյուրը պետք է գիտակցի դրա կարևորությունը: Սովորողը ինքը պետք է իր համար գտնի համապատասխան մեթոդ, իսկ ուսուցանողը ինքնին խթանող դեր կհանդիսան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մեթոդ ունի որոշակի պայմաններում օբյեկտիվ արժեք:

Ուղղակի մեթոդներն առավել նպատակահարմար են օգտագործել փոքր խմբերում, բազմալեզու կամ միալեզու դասարանում, եթե ուսուցիչը չի տիրապետում աշակերտների լեզվին՝ սահմանափակ շրջանակներում բանավոր լեզվի իմացություն սովորեցնելու համար:

Համեմատական մեթոդները կարող են կիրառվել միայն մեկլեզու դասարանում, երբ ուսուցիչը խոսում է աշակերտների մայրենի լեզվով, և երբ ընդհանուր կրթական և գործնական նպատակներ են դրված, հատկապես ընկալունակ լեզվի տիրապետման առումով: Օգտագործվում են նաև խառը մեթոդներ՝ կախված օտար լեզվի ուսուցման նպատակներից և հատուկ պայմաններից: Պետք է յուրաքանչյուրն իր դասին օգտագործի համապատասխան մեթոդներ, որոնք հնարավորություն կընձեռեն դասապրոցեսն իրականացնել հաջողված: Յուրաքանչյուր մեթոդ օտար լեզվի ուսուցման համար ունի իր առավելությունները և դրանք հիմք են հանդիսանում ուսուցումը առավել հաջողված կազմակերպելուն: Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է իր աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ, չէ՞ որ ուսուցիչների ամբողջ հպարտությունը աշակերտների մեջ է, իրենց ցանած սերմերի աճի մեջ:

Օգտագործված գրականություն

- 1.Օտար լեզուներ ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշային վերջնարդյունքները և օրինամեղի ծրագրերը
- 2.Անգլերեն: ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութ
3. <http://ysu.am> › files › otar-lezvi-dasavandman
4. <http://moodle.brusov.am> › cat..
5. <https://funnyenglishforyou.wordpress.com> ›
- 6.<http://carla.umn.edu/strategies/resources/SBIclarify.pdf>
- 7.Nunn David (1991-01-01).”Communicative Tasks and the Language Curriculum”.TESOL Quarterly.25(2):

